

(Նկարագրական հասուած մը, Ղրիմի մէջ
գրուած)

Իսկ յայդն Բշի յորում Յոյնք Այա Դրեատա կատարեն զտօն զերիս աւուրս եւ երթան ի վանս կուսանաց յուխտ, որ յանուն Սուրբ Աստուածածնին միափերթ վիմափոր գաւթիւն եւ տաճարիւն յի ստորտ լերինն բարձու դիտելով ընդ հարաւ՝ ի վերայ քաղաքին եւ ի ծով երկրին Ղրիմայ: Եւ զմեզ հրաւիրեալ անդ՝ տեսաք զեկեղեցին ուխտելով եւ զուխտաւոր պառաւուռնս եւ զկուսանք սեւազգեստեալք՝ ահն ունելով յուսով պայծառ զգեստուց ի հարանարան երկնաւոր արքային մխիթարութեան: Իսկ որ ի վերոյ դասք արանց, Յունաց եւ Հայոց, կերակրօք եւ ըմպելօք նստէին եւ կիսոցն փողովք կաքաւէին: Եւ մերձ եկեղեցոյն յատեան ի խոտուտն վայրք՝ դասք աղջըկանց եւ հարսանց պար բոլորեալ ձեպառձեպ զընթացս կաքաւուցն առնէին, որ ոչ էր ըստ օրինի գոտերացն թրակացուց եւ կամ ովկիանոյն կղզեաց էր յօրինած պարին՝ դառնալով եւ առնելով գոտացն քայլափոխութիւնս, այլ որպէս թէ ստէպ ստէպ վերիվեր թռելով, այսինքն՝ զձեռս ի ձեռս առեալ եւ երբեմն բազուկք ընդ բազկաց վերիվայր ձեմելով վրազագոյնս եւ շեշտակապակս բոլորածիր մանուածովք իրբեւ անձանց Ծ-ից վաղասուաց ընթացիւք ըստ յօդեղինացն տարազու զպարն բոլորէին. որ ընդ փոյթ ընդ փոյթ ձեպին շրջապարին բոլլիցն ձեմականի՝ զտեսողաց սիրտս ընդ քթթել ահանց իսկոյն յինքեանս ստէպ քարչէին: Իսկ ի միջի պարուն կանգնեալ ոմն չնձերագոյն՝ ունելով ի ձեռն զքնար վեշաղեաց՝ ընդ երգս ձայնից նոցուն յարմարէր: Ո՛ւր թէ իշխանութիւն կալեալ էի զարիւն չնձերին արժանի յերկիր ի նոյն